ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎(0281) 60-001

N 1

«20» հունվարի 2012թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արենիի համայնքի ավագանու 20.01.2012թ. թիվ 1 նիստի օրակարգը՝

1. Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Արենիի համայնքի 2011թ. տարեկան բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման հաղորդման մասին:
3. Արենիի համայնքի տարածքում 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին :
4. 2012 թվականի Արենիի համայնքի ղեկավարի վարձատրության չափը, ղեկավարի աշխատակազմի և գյուղապետարանի ենթակա կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին :
5. Արենիի համայնքի 2012 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդի գումարի բաշխման մասին :
6. Արենիի համայնքի 2012 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին :
7. Արենիի համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին:
8. Արենիի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին:

կողմ՝ 5 , դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0 :

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա.Ասատրյան | [signature] | ---------- | ---------- |
| 2.Մ.Մաքևոսյան | [signature] | ---------- | ---------- |
| 3.Հ.Նազարյան | [signature] | ---------- | ---------- |
| 4.Թ. Պետրոսյան | [signature] | ---------- | ---------- |
| 5.Է. Սիմոնյան | [signature] | ---------- | ---------- |

Արենիի համայնքի ղեկավար [signature, stamp] Ժ.Եղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎(0281) 60-001

N 2

«20» հունվարի 2012թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բյուջեի կատարման մասին 4-րդ եռամսյակի հաղորդումը ընդունել ի գիտություն՝

ա/ մուտքային մասով – 27626.4 հազ. դրամ կամ 98.6 %
սեփական մուտքեր – 5787.6 հազ. դրամ կամ 98.4%
բ/ ծախսային մասով – 24345.8 հազ. դրամ կամ 78.0 %

կողմ՝ 5 , դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0 :

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| 1. Ա.Ասատրյան | [signature] | | |
| 2.Մ.Մաթևոսյան | [signature] | | |
| 3.Հ.Նազարյան | [signature] | | |
| 4.Թ. Պետրոսյան | [signature] | | |
| 5.Է. Սիմոնյան | [signature] | | |

Արենիի համայնքի ղեկավար [signature] Ժ.Եղյան

Արենիի համայնքի 2011թ. տարեկան բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման հաղորդում

## ՄՈՒՏՔԵՐ

| հ/հ | Եկամուտներ | տար. պլան հազ. դր. | կատ.% տարվա նկատ. | 12 ամսվա. պլանը հազ.դր. | փաստացի կատարումը հազ. դր. | կատար ման % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ | 2100.0 | 102.8 | 2100.0 | 2159.3 | 102.8 |
| 2 | Հողի հարկ | 2331.1 | 102.0 | 2331.1 | 2376.8 | 102.0 |
| 3 | Հողի վարձավճար | 650.0 | 128.7 | 650.0 | 836.8 | 128.7 |
| 4 | Տեղական տուրքեր | 600.0 | 41.6 | 600.0 | 249.4 | 41.6 |
| 5 | Հողի օտարումից մուտքեր | - | - | - | 165.3 | - |
| | օրենքով սահմանված այլ ոչ հարկային եկամուտներ | 200.0 | - | 200.0 | - | - |
| | Սեփական մուտքեր | 5881.1 | 98.4 | 5881.1 | 5787.6 | 98.4 |
| | Անասնաբույժական ծառայություններ | 600.0 | 50.0 | 600.0 | 300.0 | 50.0 |
| | Դոտացիա | 21538.8 | 100.0 | 21538.8 | 21538.8 | 100.0 |
| | Ընդամենը | 28019.9 | 98.6 | 28019.9 | 27626.4 | 98.6 |
| ազատ մնացորդ | | 3184.2 | | | | |

## ԾԱԽՍԵՐ

| հոդ. համ ար | հոդվածի անվանումը | տար. պլան հազ. դր | կատար ման % | 12 ամսվա պլանը հազ.դր. | փաստ. կատարում հազ.դր. | կատար ման % |
|---|---|---|---|---|---|---|
| 4111 | Աշխատավարձ | 12200.0 | 93.3 | 12200.0 | 11385.0 | 93.3 |
| 4112 | Պարգևատրումներ, դրամ. խրախուսումներ | 670.0 | 100.0 | 670.0 | 670.0 | 100.0 |
| 4131 | Պարտադիր սոց. ապահովագրության վճար | 2480.0 | 90.1 | 2480.0 | 2234.7 | 90.1 |
| 4212 | Էներգետիկ ծառայություն | 550.0 | 74.2 | 550.0 | 408.1 | 74.2 |
| 4214 | Կապի ծառայություններ | 370.0 | 92.6 | 370.0 | 342.9 | 92.6 |
| 4215 | ապահովագրական ծախսեր | 30.0 | 86.6 | 30.0 | 26.0 | 86.6 |
| 4221 | Գործուղման ծախսեր | 100.0 | 67.0 | 100.0 | 67.0 | 67.0 |
| 4222 | Արտագնա գործուղումներ | 235.0 | 100.0 | 235.0 | 235.0 | 100.0 |
| 4231 | Վարչական ծառայություններ | 50.0 | - | 50.0 | - | - |
| 4232 | Համակարգչային ծառայութ. | 120.0 | 18.0 | 120.0 | 21.6 | 18.0 |
| 4234 | Տեղեկատվական ծառայութ. | 30.0 | - | 30.0 | - | - |
| 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառ. | 220.0 | - | 220.0 | - | - |
| 4241 | Մասնագիտական ծառայութ. | 760.0 | 46.3 | 760.0 | 352.2 | 46.3 |
| 4252 | Մեքենաների և սարք.-ի ընթացիկ նորոգում և պահպանում | 450.0 | 77.7 | 450.0 | 350.0 | 77.7 |
| 4261 | Գրասենյակ. նյութեր և հագուստ | 350.0 | 57.1 | 350.0 | 200.0 | 57.1 |
| 4264 | Տրանսպորտային ծախսեր | 910.0 | 82.4 | 910.0 | 750.0 | 82.4 |
| 4267 | Կենց. և հանրային սննդի նյութեր | 15.0 | - | 15.0 | - | - |
| 4269 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 1350.0 | 41.3 | 1350.0 | 600.0 | 41.3 |
| 4622 | Կապ. դրամաշ. միջ. կազմակերպ. | 300.0 | 100.0 | 300.0 | 300.0 | 100.0 |
| 4637 | Ընթացիկ դրամաշնորհներ | 4100.0 | 90.3 | 4100.0 | 3704.1 | 90.3 |
| 4729 | Նպաստներ բյուջեից | 2639.9 | 100.0 | 2639.9 | 2639.5 | 100.0 |
| 4819 | Նվ. այլ շահույթ չհետապ. կազմ. | 20.0 | 96.0 | 20.0 | 19.2 | 96.0 |
| 4822 | Այլ հարկեր | 70.0 | - | 70.0 | - | - |
| | Ընդամենը վարչական բյուջե | 28019.9 | 86.7 | 28019.9 | 24305.3 | 86.7 |
| | **Ֆոնդային Բյուջե** | | | | | |
| 5113 | Շենքերի և շին. կապ. վերանորոգ. | 3114.2 | | 3114.2 | - | - |
| 5132 | Ոչ նյութական հիմն. միջոցներ | 70.0 | 57.1 | 70.0 | 40.0 | 57.1 |
| | Ընդամենը | 31204.1 | 78.0 | 31204.1 | 24345.8 | 78.0 |

Արենիի համայնքի ղեկավար Ժ. Եղյան

ԱՐԵՆԻ ... ՀՀ ... ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎(0281) 60-001

N 3-Ն

«20» հունվար 2011թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 10-րդ հոդվածների և «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արենիի համայնքում 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրուքաչափերը սահմանել հետևյալ դրույքաչափերով՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան ՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա)մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ (այգեգործական ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 դրամ:

3.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

ա/ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ։

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ :

4. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ :

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ։

կողմ՝ 5 , դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0 :

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա.Ասատրյան | (ստորագրություն) | ---------------- | ---------------- |
| 2.Մ.Մաթևոսյան | (ստորագրություն) | ---------------- | ---------------- |
| 3.Հ.Նազարյան | (ստորագրություն) | ---------------- | ---------------- |
| 4.Թ. Պետրոսյան | (ստորագրություն) | ---------------- | ---------------- |
| 5.Է. Սիմոնյան | (ստորագրություն) | ---------------- | ---------------- |

Արենիի համայնքի ղեկավար Ժ.Եռյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎(0281) 60-001

N 4 -Ն

«20» հունվար 2012թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Արենիի համայքի ղեկավարի 2012 թվականի վարձատրության չափը սահմանել 160000 դրամ :

2. 2012 թվականի համար հաստատել Արենիի համայնքի ղեկավարի աշխատակազմի ներքոհիշյալ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

1) գյուղապետի տեղակալ 1 հաստիք , դրույքաչափը՝ 120000 դրամ :
2) աշխատակազմի քարտուղար 1 հաստիք , դրույքաչափը 125000 դրամ :
3) գլխավոր մասնագետ ֆինանսիստ 1 հաստիք , դրույքաչափը՝ 80000 դրամ :
4) գլխավոր մասնագետ հաշվապահ 1 հաստիք , դրույքաչափը՝ 80000 դրամ:
5) գլխավոր մասնագետ համայնքի երիտասարդական և սպորտմասսայական աշխատանքների մեթոդիստ 1 հաստիք , դրույքաչափը՝ 80000 դրամ :
6) առաջատար մասնագետ գույքահարկերի և հողի հարկի հաշվառման գծով օպերատոր 1 հաստիք, դրույքաչափը՝ 65000 դրամ:
7) մեքենագրուհի-հավաքարար 1 հաստիք, դրույքաչափը՝ 40000 դրամ :

3.Արենիի համայնքի մշակույթի տան աշխատակիցների համար սահմանել հետևյալ թվաքանակը, հաստիքացուցակը և դրույքաչափերը՝

1) մշակույթի տան տնօրեն 1 հաստիք , դրույքաչափը՝ 50000 դրամ :
2) մշակույթի տան գեղարվեստական մասի վարիչ 1 հաստիք , դրույքաչափը՝ 35000դրամ:
3) մշակույթի տան հավաքարար 1 հաստիք , դրույքաչափը ՝ 35000 դրամ :
4) մշակույթի տան և վարչական շենքի գիշերային պահակ 1 հաստիք , դրույքաչափը՝ 32500դրամ:

4. Արենիի համայնքի գրադարանի աշխատակիցների համար սահմանել հետևյալ թվաքանակը, հաստիքացուցակը և դրույքաչափերը՝

1) գրադարանի վարիչ 1 հաստիք , դրույքաչափը՝ 40000 դրամ:

կողմ՝ 4 , դեմ՝ 1 , ձեռնպահ՝ 0 :

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| 1. Ա.Ասատրյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| 2.Ս.Մաքևոսյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| 3.Հ.Նազարյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| 4.Թ. Պետրոսյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| 5.Է. Սիմոնյան | ------------------ | ------------------ | ------------------ |

Արենիի համայնքի ղեկավար Ժ.Եղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N 5 — գ. Արենի ☎(0281) 60-001

«20» հունվարի 2012թ.

# ՈՐՈՇՈՒՄ

**ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ԳՈՒՄԱՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ:**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Արենիի համայնքի 2011 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդի 1852,0 հազար դրամ գումարը ուղղել 2012 թվականի տարեկան բյուջեի ֆոնդային մաս:

կողմ՝ 5 , դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0 :

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա.Ասատրյան | (ստորագրություն) | ---------- | ---------- |
| 2.Մ.Մաթևոսյան | (ստորագրություն) | ---------- | ---------- |
| 3.Հ.Նազարյան | (ստորագրություն) | ---------- | ---------- |
| 4.Թ. Պետրոսյան | (ստորագրություն) | ---------- | ---------- |
| 5.Է. Սիմոնյան | (ստորագրություն) | ---------- | ---------- |

Արենիի համայնքի ղեկավար Ժ.Եդոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
գ. Արենի ☎(0281) 60-001

N 6-Ն «20» հունվարի 2012թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, 54-րդ հոդվածների պահանջներով և համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածների Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է`

1. Հաստատել Արենիի համայնքի 2012 թվականի տարեկան բյուջեն.
   ա/ եկամուտների գծով` 27612,7 հազար դրամ
   բ/ ծախսերի գծով` 34077,6 հազար դրամ
   Բյուջեի ազատ մնացորդը տարեսկզբին` 6464,9 հազար դրամ :
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների` հատված 1
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման` հատված 2
4. Հաստատել համայնքի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման` հատված 3
5. Հաստատել բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/ հատված 4
6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ պակասուրդի / դեֆիցիտի/ ֆինանսավորման աղբյուրները` հատված 5

7.Սահմանել որ`
ա/ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում` պահպանելով ծախսերի համամասնությունները,
բ/ ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգման նախատեսված հոդվածների միջև «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը:

կողմ` 4 , դեմ` 1 , ձեռնպահ` 0 :

| Ավագանու անդամներ` | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա.Աստրյան | [signature] | | |
| 2.Մ.Մաքևոսյան | [signature] | | |
| 3.Հ.Նազարյան | | [signature] | |
| 4.Թ. Պետրոսյան | [signature] | | |
| 5.Է. Սիմոնյան | [signature] | | |

Արենիի համայնքի ղեկավար [signature] Ժ.Եոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎(0281) 60-001

N 7

«20» հունվարի 2012թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է`

Հաստատել Արենիի համայնքի սեփականության 2012 թվականի գույքագրման փաստաթղթերը`

Հիմնական միջոցներ

հաշվեկշռային արժեքով -- 159405,170 հազար դրամ

մնացորդային արժեքով -- 78316,137 հազար դրամ

Շրջանառու միջոցներ -- 446,747 հազար դրամ

կողմ` 5 , դեմ` 0 , ձեռնպահ` 0 :

| Ավագանու անդամներ` | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա.Ասատրյան | [signature] | ---------- | ---------- |
| 2.Մ.Մաթևոսյան | [signature] | ---------- | ---------- |
| 3.Հ.Նազարյան | [signature] | ---------- | ---------- |
| 4.Թ. Պետրոսյան | [signature] | ---------- | ---------- |
| 5.Է. Սիմոնյան | [signature] | ---------- | ---------- |

Արենիի համայնքի ղեկավար [signature, stamp] Ժ.Եդյան

գ. Արենի

# ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ
# ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
## Հիմնական միջոցներ

| h/h | անվանումը | քանակը հատ | շահ. տարին | հաշվեկշ. արժեք | մաշվածք | մնացորդ արժեք |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյանկ | հատ 1 | 1964թ. | 925570 | 925570 | 0 |
| 2 | Խաղասենյակ | հատ 1 | 1957թ. | 817600 | 817600 | 0 |
| 3 | Կուլտուրայի տուն | հատ 1 | 1957թ. | 12566000 | 4774143 | 7791857 |
| 4 | Փողոցային լույսեր | կմ | 1982թ. | 723020 | 723020 | 0 |
| 5 | Հուշարձան | հատ 1 | 1968թ. | 903000 | 0 | 903000 |
| 6 | Ջրմուղ ներքին ցանց | 49կմ | 1971թ. | 613640 | 613640 | 0 |
| 7 | Բար | հատ 1 | 1987թ. | 214200 | 158105 | 56095 |
| 8 | Դրենաժ | գծ/մ | 1985թ. | 8878680 | 8878680 | 0 |
| 9 | Ներքին ոռոգման ցանց | 49կմ | 1985թ. | 44640 | 44640 | 0 |
| 10 | Պատճենահանման սարք | հատ1 | 2002թ. | 166724 | 132925 | 33799 |
| 11 | Էլ. հոսանքի հաշվիչ | հատ 1 | 2004թ.փետ | 15000 | 10967 | 4033 |
| 12 | Արբանյակային ալեհավաք | հատ 1 | 2004թ.փետ | 200000 | 145969 | 54031 |
| 13 | Տյուներ | հատ 1 | 2005թ.մարտ | 70500 | 47232 | 23268 |
| 14 | Ավտոմեքենա վազ-212104 | հատ 1 | 2005թ.փետ | 3648029 | 1953869 | 1694160 |
| 15 | Համակարգիչ | հատ 1 | 2006թ.մայ | 208320 | 185863 | 22457 |
| 16 | Մոնիտոր | հատ 1 | 2006թ.մայ | 72077 | 65896 | 6181 |
| 17 | UPS | հատ 1 | 2006թմայ | 27900 | 24311 | 3589 |
| 18 | Տպիչ սարք | հատ 1 | 2006թ.մայ | 187200 | 171148 | 16052 |
| 19 | Օդափոխիչ | հատ 1 | 2006թ.դեկ | 200000 | 111260 | 88740 |
| 20 | Սեղան-կլոր | հատ 1 | 2006թ.դեկ | 27000 | 15020 | 11980 |
| 21 | Սեղան | հատ 1 | 2006թ.դեկ | 25000 | 13907 | 11093 |
| 22 | Պահարան | հատ 1 | 2006թ.դեկ | 31000 | 17245 | 13755 |
| 23 | Պահարան փոքր | հատ 1 | 2006թ.դեկ | 28000 | 15251 | 12749 |
| 24 | Կաթսայատուն | հատ 1 | 2006թ.ապր | 3800000 | 969895 | 2830105 |
| 25 | Համակարգիչ | հատ 1 | 2006թ.դեկ | 208320 | 181525 | 26795 |
| 26 | Մոնիտոր | հատ 1 | 2006թ.դեկ | 72075 | 62804 | 9271 |
| 27 | UPS | հատ 1 | 2006թ.դեկ | 27900 | 24402 | 3498 |
| 28 | Տպիչ սարք | հատ 1 | 2006թ.դեկ | 187200 | 164268 | 22932 |
| 29 | «Ավշարա թափ»-ի ոռոգման ներքին ցանց | 7913 մ | 08.10.06 | 86990650 | 41580986 | 45409664 |
| 30 | «Իշկա թափ»-ի ոռոգման ներքին ցանց | 3525 մ | 09.08.06 | 34683300 | 16578399 | 18104901 |
| 31 | Խմելու ջրի ջրագիծ | 0.5 կմ 5 դույմ | 1969թ | 298000 | 142442 | 155558 |
| 32 | Զուգարանակոնք | հատ 1 | 2009թ.դեկ | 38000 | 10545 | 27455 |
| 33 | Լվացարան-պահարան | հատ 1 | 2009թ.դեկ | 35000 | 9713 | 25287 |
| 34 | Լվացարան | հատ 1 | 2009թ.դեկ | 25000 | 6937 | 18063 |
| 35 | Փոշեկուլ | հատ 1 | 2009թ.դեկ | 22300 | 6188 | 16112 |
| 36 | Սառնարան | հատ 1 | 2009թ.դեկ | 90000 | 24975 | 65025 |
| 37 | Համակարգիչ | հատ 1 | 2009թ.դեկ | 170000 | 86700 | 83300 |
| 38 | Մոնիտոր | հատ 1 | 2009թ.դեկ | 80000 | 40800 | 39200 |
| 39 | UPS | հատ 1 | 2009թ.դեկ | 25000 | 12750 | 12250 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ / հազ. դրամ/ | | | 158301845 | 79749190 | 77596255 |

գ. Արենի

# ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ

## ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

| N | անվանումը | չափի միավոր քանակ | գինը | գումարը դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Սեղան | հատ 2 | 542 | 1084 |
| 2 | Սեղան | հատ 2 | 135 | 270 |
| 3 | Սեղան | հատ 1 | 270 | 270 |
| 4 | Վարագույր | ք.մ. 8 | 1200 | 9600 |
| 5 | Սեյֆ | հատ 2 | 295 | 590 |
| 6 | Պահարան | հատ 3 | 173 | 519 |
| 7 | Սեյֆ | հատ 1 | 500 | 500 |
| 8 | Էլ. սալիկ | հատ 1 | 1500 | 1500 |
| 9 | Հայելի | հատ 1 | 600 | 600 |
| 10 | Աթոռ | հատ 17 | 11800 | 200600 |
| 11. | Աթոռ | հատ 3 | 13000 | 39000 |
| 12 | Լինոլիում | մ. ք. 27 | 1850 | 50000 |
| 13 | Կավրոլիտ | գ. մ. 12,5 | 4000 | 50000 |
| 15 | կավրոլիտ | մ.ք. 4,5 | 6000 | 27000 |
| 16 | Մկնիկ | հատ 1 | 3000 | 3000 |
| 17 | Հաշվեսարք | հատ 5 | 2000 | 10000 |
| 18 | Դակիչ | հատ 1 | 3000 | 3000 |
| 19 | Գրեն. պիտ. հավաքածու | հատ 4 | 4500 | 14000 |
| 20 | Կարիչ | հատ 1 | 3000 | 3000 |
| | Ընդամենը` | | 56365 | 379433 |

## ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ

| հ/հ | Հեղինակ | Նկարի անվանումը | չափսը |
|---|---|---|---|
| 1 | Պետրոսյան Ռուդիկ | «Բակը գարնանը» | 70/60 |
| 2 | Պապիկյան Արտավազդ | «Կեսօր» | 70/90 |
| 3 | Ասատրյան Համլետ | «Հին ջրաղացի մոտ» | 70/65 |
| 4 | Պետրոսյան Ռուդիկ | «Գառնին» | 70/90 |
| 5 | Պետրոսյան Ռուդիկ | «Ղարաբաղյան բնանկար» | 70/90 |
| 6 | Պետրոսյան Ռուդիկ | «Գեղարդ» | 80/70 |
| 7 | Պետրոսյան Ռուդիկ | «Բնանկար» | 70/80 |
| 8 | Պետրոսյան Ռուդիկ | «Արունը Արաբկիրում» | 65/70 |
| 9 | Ասատրյան Համլետ | «Կեսօր» | 65/70 |
| 10 | Պետրոսյան Արտավազդ | «Ձոն» | 80/100 |
| 11 | Ասատրյան Համլետ | «Գողտասար» | 90/70 |
| 12 | Պետրոսյան Ռուդիկ | «Երեկո» | 60/80 |
| 13 | Ասատրյան Համլետ | «Հին Դիլիջանում» | 70/90 |

գ. Արենի

# ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ
## ԱՐԵՆԻԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ
### Հիմնական միջոցներ

| հ/հ | անվանումը | քանակը հատ | շահ. տարին | հաշվեկշ. արժեք | մաշվածք | մնացորդ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ռոյալ «Կարմիր հոկտեմբեր» | 1 | -- | 55950 | 54368 | 1582 |
| 2 | Բարձրախոս «ՁԵՄՊ-12» | 1 | 2002թ | 160000 | 126811 | 33189 |
| 3 | Ուժեղացուցիչ «ՏԵԳ մակ -70» | 1 | 2002թ | 96000 | 76086 | 19914 |
| 4 | Բարձրախոս «Պանասոնիկ» | 2 | 2002թ | 30000 | 23776 | 6224 |
| 5 | Բարձրախոսի տակդիր | 1 | 2002թ | 13500 | 10974 | 2526 |
| 6 | Էլ. հոսանքի կարգավորիչ | 1 | 2004թ. | 15000 | 10969 | 4031 |
| 7 | սեղան | 2 | 2007թ.դեկ | 50000 | 23899 | 26101 |
| 8 | ամբիոն | 1 | 2007թ.դեկ | 20000 | 9560 | 10440 |
| 9 | աթոռ | 10 | 2007թ.դեկ | 100000 | 47800 | 52200 |
| | ընդամենը | | | 540450 | 384243 | 156207 |

Գ. Արենի

# ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ

Մշակույթի տուն
Շրջանառու միջոցներ

| h/h | անվանումը | քանակը հատ | 1 հատի գինը | ընդամենը դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | սեղան /2 տումբանոց/ | 1 | 1310 | 1310 |
| ընդամենը | | | 1310 | 1310 |

Նկարներ

| h/h | նկարիչ | նկարի անվանումը | չափը |
|---|---|---|---|
| 1 | Ասատրյան Համլետ | «Հին դիլիջան» | 70/90 |
| 2 | Ասատրյան Համլետ | «Հին տներ դիլիջանում» | 81/61 |
| 3 | Պետրոսյան Ռուդիկ | «Ամառ» | 60/80 |
| 4 | Պետրոսյան Ռուդիկ | «Գյուղական բնանկար» | 90/70 |
| 5 | Ասատրյան Համլետ | «Աշուն» | 90/70 |
| 6 | Պետրոսյան Ռուդիկ | «Նատյուրմորդ» | 70/90 |
| 7 | Պետրոսյան Ռուդիկ | «Գյուղաական բնանկար» | 79/99 |
| 8 | Քերթեզյան Շանթ | «Բակում» | 80/80 |

գ. Արենի

# ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ

## Արենի համայնքի գրադարան հիմնական միջոցներ

| հ/հ | անվանումը | քանակը հատ | 1 հատի գինը | ընդամենը դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | գրքեր | 11178 | -- | 435055 |
| 2 | գրքեր /2004թ. դեկտեմբեր/ | 78 | -- | 42200 |
| 3 | գրքեր /2007թ.սեպտեմբեր/ | 10 | -- | 6720 |
| 4 | գրքեր /2009թ. հոկտեմբեր/ | 60 | -- | 33900 |
| 5 | գրքեր /2011թ. նոյեմբեր/ | 54 | -- | 45800 |
| | ընդամենը | 11380 | -- | 563675 |

գ. Արենի

# ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ

## Արենի համայնքի գրադարան Շրջանառու միջոցներ

| հ/հ | անվանումը | քանակը հատ | 1 հատի գինը | ընդամենը դրամ/ռուբլի |
|---|---|---|---|---|
| 1 | կատալոգի արկղ | 1 | 2511 | 2511 |
| 2 | սեղան /փոքր/ | 1 | 427 | 427 |
| 3 | կատալոգի արկղ | 1 | 924 | 924 |
| 4 | սեղան /1 տումբանոց/ | 1 | 1694 | 1694 |
| 5 | դարակ երկաթյա | 60 | 885 | 53100 |
| 6 | աթոռ | 4 | 434 | 1736 |
| 7 | ցուցափեղկ | 1 | 2402 | 2402 |
| 8 | դարակ | 2 | 1605 | 3210 |
| | ընդամենը | | 10882 | 66004 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎(0281) 60-001

N 8

«20» հունվարի 2012թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Խնդրել ՀՀ Կառավարության 22.05.2001թ. N 436 որոշմամբ հաստատված Արենիի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն և թույլատրել Արենիի համայնքի վարչական սահմաններում գտնվող «Արենի ՀԷԿ» ՓԲԸ-ին պատկանող 004-050 ծածկագրով 0.01 հա տնամերձ հողամասը սահմանված կարգով փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ՀԷԿ-ի կարգավորիչ ավազանի կառուցման համար:

կողմ՝ 5 , դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0 :

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ա.Ասատրյան | [signature] | | |
| 2.Մ.Մաթևոսյան | [signature] | | |
| 3.Հ.Նազարյան | [signature] | | |
| 4.Թ. Պետրոսյան | [signature] | | |
| 5.Է. Սիմոնյան | [signature] | | |

Արենիի համայնքի ղեկավար՝ Ժ.Եղյան